



ԱՂՔԱՏՆ ՈՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ



Աղքատ մարդ մը երեկոյեան տուն վերադառնալով իր բախտը կ'անիծէ ըսելով.

- Երջանկութիւն, ո՞ւր է երջանկութիւնը: Թող անիծեալ ըլլայ ան...

Հագիւ մարդը իր խօսքը կ'աւարտէ, երջանկութիւնը կ'որոշէ լսել իր բողոքը եւ անոր ձեռք երկարել ըսելով.

- Մօտեցի՛ր, մի՛ վախնար, ես քու երջանկութիւնդ եմ:

Այս ըսելով երջանկութիւնը մարդուն կը տանի հեռու, շա՛տ հեռու տեղ մը եւ անոր խոռոչի մը մուտքին դիմաց կը կանգնեցնէ ըսելով.

- Այստեղ աշխարհի բոլոր հարստութիւններն ու գանձերը պահուած են: Ներս մտի՛ր եւ հաւաքէ՛ ինչ որ կ'ուզես, բայց չափէն աւելի մի՛ առներ, որպէսզի կարենաս շալկել գանոնք, որովհետեւ ճամբան երկար է ու դժուար եւ դուն առանձին տուն պիտի վերադառնաս: Ուշադի՛ր, այն վայրկեանին որ պարկը ուսեղ վար իջեցնես եւ գետին



դնես, ամէն բան կը կորսնցնես: Խելացի եղի՛ր եւ ազահութիւն մի՛ ըներ:

Այս ըսելով երջանկութիւնը կ'անհետանայ, իսկ աղքատ մարդը խոռոչէն ներս կը մտնէ: Անհամար գանձերէն, թանկարժէք քարերէն ու ոսկիի եւ արծաթի առատութենէն անոր գլուխը կը դառնայ: Աչքերը կարծես ապշանքէն դուրս կ'իյնան: Ան կը սկսի ընտրել ամէնէն գեղեցիկ գանձերը եւ գանոնք տեղաւորել պարկին մէջ: Այնքան կը լեցնէ, որ այլեւս տեղ չի մնար:

Ան լեցուն պարկը ուսին դրած, գանձերու խոռոչէն դուրս կու գայ: Քանի մը քայլ առնելէ ետք, կը զգայ որ բեռը անտանելի է, քրտինքը կը հոսի եւ շունչը կը կտրուի: Կը մտածէ, թէ ի՞նչ պիտի պատահի եթէ պարկը գետին դնէ ու գլորելով զայն դէպի տուն առաջնորդէ:

Իրապես ալ... պարկը ուսէն կ'իջեցնէ, կը սկսի գլորել ու կը բռնէ տան ճամբան:

Երբ քիչ մնացեր էր տուն հասնելու, ան կրկին կ'ուզէ ստուգել պարկին մէջ գտնուած գանձերը եւ անոնցմով ուրախանալ: Սակայն հագիւ կը ծռի, պարկը կ'անհետանայ...

Մարդը կը ճչայ, կը պոռայ, կու լայ... կրկին կ'անիծէ իրեն բաժին ինկած բախտը:

Յանկարծ երջանկութիւնը դարձեալ կ'երեւի իր առջեւ, բայց այս անգամ բարկացկոտ աչքերով, ու անոր կ'ըսէ.

- Դուն ես անբախտութեանդ պատճառը: Քեզ ոչ մէկ բան կը գոհացնէ: Քեզի շա՛տ տրուեցաւ, բայց դուն պետք էր առնէիր այն, ինչ որ կրնայիր կրել: Սակայն ազահութիւնդ քեզի յաղթեց եւ դուն կորսնցուցիր ամէն ինչ: Թող այս մէկը դաս ըլլայ քեզի, որ շատին ետեւէն ինկողը՝ քիչն ալ կը կորսնցնէ...

ԹԻՒԵ ՊԱՏՐԱՍՏԵՆՆԵՐ՝ ՄԱՐՏԻՆԻ ԱՇԽԱՏԱՆՆԵՐ, ԿԱՐԱՄԱՐՈՒՄԵՆՆԵՐ, ՆԱԿԱՅԻ ԲԵՐՈՒՄԵՆՆԵՐ


Գրե՛ իւրաքանչիւր ժամացոյցին ցոյց տուած ժամանակը:



Ամբողջացո՛ւր բառերը համապատասխան հնչիւններով (ու, իւ, թե՛ ոյ):

- Թռչ -- ն
- ճ -- ղ
- բ -- ս
- Պայ -- սակ
- բ -- րիկ
- Գ -- ղ

:(ւովե 'հվմսմ 'հոռսմոհ 'ղսմ 'ւովց 'ղսՅսել) :ւգղղոլոոտու



Կրնա՞ս լուծել: Բազմապատկութեան նշանը օգտագործելով, բոլոր թիւերը հնգապատկե՛ եւ իւրաքանչիւր թիւի քով պատասխանները արձանագրե՛:

ԾԻԾԱՂ

Փոքրիկ Արամիկ ծնողքին հետ ինքնաշարժով գիւղէն քաղաք վերադարձած պահուն կը հարցնէ.
 - Մայրի՛կ, Լուսի՛նս ալ մեր հետ քաղաք կու գայ...

ՓԻՆՈՔԻՈՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Ժամանակին բարի ծերունի մը կար, որ Վարպետ Անտոն կը կոչուէր: Վարպետ Անտոն ո՛չ տուն ուներ, ո՛չ ազգական, ո՛չ ալ ընտանիք: Ան աղքատիկ տնակի մը մէջ կը բնակէր: Իր երիտասարդութիւնը շատ արագ անցաւ. իսկ այժմ, օրերը իրեն համար դանդաղ կը քալէին կարծեք: Իր ձանձրոյթը փարատելու համար, փափաքեցաւ որ մէկը ընկերակից դառնայ իրեն այս առանձնութեան մէջ: Օր մըն ալ գնաց իր ատաղձագործ ընկերոջ մօտ՝ Վարպետ Սիմոնին, - եւ ըսաւ անոր.

- Փայտի կտոր մը տո՛ւր ինծի եւ ատաղձագործի գործիքներ, որպէսզի ինծի խաղալիք մը շինեմ անով զբաղիմ:

Վարպետ Սիմոն փայտի կտոր մը եւ ատաղձագործի գործիքներ սիրով տուաւ իր ընկերոջ ու ըսաւ անոր.

- Այս փայտի կտորով ուզածդ կրնաս շինել:

Վարպետ Անտոն շնորհակալութիւն յայտնեց Վարպետ Սիմոնին, առաւ փայտի կտորը եւ ուրախութեամբ վերադարձաւ տուն: Ճամբան ինքնիրեն կը մտածէր.

- Այս փայտի կտորէն աշխարհի ամենէն գեղեցիկ պուպրիկը պիտի շինեմ ու այդ պուպրիկին անունը պիտի դնեմ՝ ՓԻՆՈՔԻՕ:

Հագիւ տուն հասած, Վարպետ Անտոն սկսաւ Փինոքիոյին շինութեան: Տարօրինակ էր այդ փայտին կտորը: Հագիւ աչքերը շինեց, անոնք սկսան իրեն նայիլ: Իսկ երբ քիթը վերջացուց, ան սկսաւ ինքնիրեն երկննալ: Վարպետ Անտոն թէ կ'ուրախանար, թէ կը զարմանար:

Երբ ան աւարտեց Փինոքիոյին ձեռքերուն եւ ոտքերուն շինութիւնը, Փինոքիոն տունէն փախաւ ու փողոց ելաւ: Բարեբախտաբար ոստիկան մը բռնեց անոր քիթէն ու բարկացաւ.

- Շո՛ւտ տուն դարձիր, անպիտա՛ն քեզի, մի՛ ձգեր որ Վարպետ Անտոն քեզմով մտահոգուի...

Փինոքիոն փախաւ ոստիկանէն ու տուն վերադարձաւ: Սակայն Վարպետ Անտոն տունը չէր: Այդ միջոցին, պատին վրայ բզեզ մը տեսաւ: Շատ բարկացաւ բզեզին վրայ ու պռռաց. *«Այս տունը իմ տունս է, դո՛ւրս ելիր այստեղէն»:*

Ապա՝ տախտակէ մուրճ մը առաւ եւ սկսաւ բզեզին զարնել:

Վարպետ Անտոն երբ տուն վերադարձաւ, մտածեց Փինոքիոյին համար հագուստ մը կարելու եւ զայն դպրոց դրկելու: Ան կ'ուզէր Փինոքիոն շնորհքով երիտասարդ մը դարձնել: Սակայն օր մը, դպրոցի ճամբուն վրայ, Փինոքիոն խամաճիկներու թատրոն մը տեսաւ: Ծախեց իր Այբբենարանը եւ հոն մտաւ: Երբ խամաճիկներու ներկայացումը վերջացաւ, Փինոքիոն անտառ գնաց: Հոն, իր ճամբուն վրայ, հանդիպեցաւ կոյր փիսոյին ու կաղ աղուէսին: Այս երկու խորամանկ կենդանիները իրեն ըսին՝ որ եթէ իր ոսկիները ցանէ, տեղը նորերը կը բուսնին: Փինոքիոն շատ զարմացաւ:

- Դրամը ծառի պէս կը բուսնի, - ըսին անոնք, - տերեւներու տեղ, կլոր-կլոր ոսկիներ կը կախուին ճիւղերէն: Ուզած ատենդ այդ ոսկիները կը փրցնես եւ կը հարստանաս:



ՏՈՒՏՈՒԿԸ

Հակառակ անոր, որ հայ ժողովուրդին պատմութիւնը դժուարութիւններով եւ տառապանքներով լեցուն եղած է, բայց հայը կրցած է ստեղծել հարուստ եւ ինքնատիպ երաժշտական մշակոյթ մը:

Երգն ու երաժշտութիւնը եղած են հայ ժողովուրդի առօրեայ կեանքին անբաժան մէկ մասնիկը:

Հայկական ժողովրդական նուագարաններէն ամենէն նշանաւորը տուտուկն է:

Տուտուկը կազմուած է՝ փողէ եւ մուկտշտուկէ: Փողը կը պատրաստուի ծիրանի (եւ երբեմն տանձի) փայտերէն եւ կ'ունենայ 8 ձայնանցք:

Իսկ մուկտշտուկը կը պատրաստուի եղեգի (ջրային բոյս՝ որմէ սրինգ կը շինեն) արմատէն եւ կը նկատուի ձայնին գլխաւոր արտադրիչը:

Տուտուկը զարմանալի նուագարան է: Տիրութեան պահուն՝ խորունկ ու թախծոտ կը հնչէ, իսկ ուրախութեան պահուն՝ ջերմ ու ոգեշնչող: Նոյն պահուն իրեն կը միանայ նաեւ տիոլն ու տափը:

